**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ**
**ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

N 231
*16 ապրիլ 2018թ.*

Հարգարժան՛ պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 57-Ա և 58-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան*
*098 048 046*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 57-Ա

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2018թ.մարտի 23-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյանի քաղաքային համայնքում 2018թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 12-Ն որոշումը և Թումանյան համայնքի Մարց գյուղի բնակչուհի ԱՁ Թերեզիկ Մամաջանյանի հայտը՝ որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի Մարց գյուղի բնակչուհի ԱՁ Թերեզիկ Մամաջանյանին՝ 2018թ. ապրիլի 1-ից մինչև 2018թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 58-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 06.04.2018թ. (Սոցիալական աշխատողի պաշտոնի անձնագրի օրինակելի ձևի մասին) N101/107.3.1/2142-18 գրությունը՝
որոշում եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 1-ին կարգի մասնագետի /ծած.3.2-1/ պաշտոնի անձնագիրը՝համաձայն N 1 հավելվածի:
2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2016թ. մարտի 21-ի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 4-Ա որոշման N4 հավելվածը:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ